# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.06.2022թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ՍՑ-ՆԳ-2022/212**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Էկո սիսթեմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Գ. Գևորգյանի (լիազորագիր՝ տրված 03.06.2022թ.),

Լ. Գաբրիելյանի (լիազորագիր՝ տրված 03.06.2022թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9980-2022 գրությամբ «Էկո սիսթեմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի 26.05.2022թ. թիվ 72/314-22 գրության հիման վրա, 31.05.2022թ. թիվ 26/26-1/9980-2022 գրությամբ նախաձեռնել է «Էկո սիսթեմ» ՍՊԸ-ին

(հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«Էկո սիսթեմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.**

«Էկո սիսթեմ» ՍՊԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 03.06.2022թ. գրությամբ, հայտնել է հետևյալը.

««ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-ի և «ԷԿՈ ՍԻՍԹԵՄ» ՍՊԸ-ի միջև 2022 թվականի ապրիլի 01-ին կնքված ապրանքի մատակարարման N ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-22/01-1 պայմանագրի և 2022 թվականի ապրիլի 25-ին կնքված Համաձայնագիր 1-ի համապատասխան «ԷԿՈ ՍԻՍԹԵՄ» ՍՊԸ-ն պետք է իրականացներ տոսախ մշտադալար և ճապկի սպիտակ թփերի մատակարարում:

Պայմանագրի պայմաններին համապատասխան մեր կողմից սկսվել է տոսախ մշտադալար և ճապկի սպիտակ թփերի մատակարարումը:

Մասնավորապես,

Պայմանագրի պայմաններին համապատասխան 2022 թվականի ապրիլի 28-ին մեր կողմից մատակարարված 10.000 հատ ճապկի սպիտակ տեսակից ընդունվել է միայն 7.800 հատը, մնացածը չի ընդունվել պատճառաբանելով, որ թփերը տերևակալված են (թեև ո՛չ ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-22/01 գնանշման հարցման հայտում, ո՛չ ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-22/01-1 պայմանագրում նշված չէ, որ չպետք է մատակարարվեն տերևակալված թփեր): Կից ներկայացնում ենք համապատասխան հանձնաժողովի անդամների կողմից ստորագրված երկու եզրակացություն (Հավելված 1, Հավելված 2), որոնցում հստակ երևում է, որ մեր կողմից մատակարարված 10.000 (տասն հազար) ճապկի սպիտակ թփերից ընդունվել է 7.800 (յոթ հազար ութ հարյուր) ճապկի սպիտակ թփեր (կից ներկայացվում է նաև 7.800 հատ ճապկի սպիտակ թփերի համար դրական եզրակացությունը՝ Հավելված 2): Մեր կողմից էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով համակարգում համապատասխան արձանագրությունը ներբեռնվել է մայիսի 03-ին, մինչ այդ ներկայացրել էինք թղթային արձանագրությունը և ակտը, քանի որ Պատվիրատուի կողմից armeps.am համակարգում չէր բացվել համապատասխան բաժին և չէր ներբեռնվել պայմանագիրը և համաձայնագիրը (համակարգով հետությամբ կարելի է ճշտել, որ համապատասխան բաժինը բացվել է ապրիլի 29-ին), ուստի մենք չէինք կարող

ներկայացնել արձանագրությունը էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով: Չնայած այն համակարգին, որ Պայմանագրում հստակ ֆիքսված է որ (կետ 5.4)

«5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:»

էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով մայիսի 03-ին ներկայացված արձանագրությունը բացասական եզրակացությամբ մերժվել է մայիսի 12-ին՝ 6-րդ աշխատանքային օրը (նկար 1), դրանով իսկ խախտելով պայմանագրի 5.4 կետի դրույթները:

Հանձնման-ընդունման արձանագրություն

| Արձանագրության համարը | Ներկայացման ամսաթիվը | Եզրակացության ամսաթիվը | Կարգավիճակը | |
|---|---|---|---|---|
| 1 | 03-05-2022 | 12-05-2022 | Մերժված | Դիտել |
| 2 | 03-05-2022 | 17-05-2022 | Հաստատված | Դիտել |
| 3 | 03-05-2022 | 05-05-2022 | Հաստատված | Դիտել |
| 4 | 05-05-2022 | 06-05-2022 | Հաստատված | Դիտել |
| 5 | 06-05-2022 | 10-05-2022 | Հաստատված | Դիտել |
| 6 | 11-05-2022 | 17-05-2022 | Հաստատված | Դիտել |
| 7 | 13-05-2022 | 17-05-2022 | Հաստատված | Դիտել |

Նկար 1

Շատ հետաքրքիր է նաև արձանագրության մերժման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը (Հավելված 3), որում մասնավորապես ասված է. «Մատակարարվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք:» Եվս մեկ անգամ ցանկանում ենք շեշտել, որ մատակարարումն իրականացվել էր ապրիլի 28-ին, ապրանքները պետք է մատակարարվեին մինչև 2022 թվականի մայիսի 16-ը ներառյալ:

Պայմանագրի պայմաններին համապատասխան 2022 թվականի մայիսի 02-ին մեր կողմից մատակարարված 4.700 հատ ճապկի սպիտակ տեսակից ընդունվել է միայն 500 հատը (Հավելված 4, Հավելված 5): Պատվիրատուի տրամաբանությամբ սրանք նույնպես

պիտի չընդունվեին, քանի որ մատակարարվել էր պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, սակայն երջանիկ պատահականությամբ, այս խմբաքանակի հետ մատակարարվել էր նաև տոսախ տեսակի թփեր և չնայած Պատվիրատուի ներկայացուցիչների բազմաթիվ հորդորներին, մենք չհամաձայնվեցինք փոխել արձանագրությունը և առանձնացնել ճապկի և տոսախ տեսակի թփերի արձանագրությունները (կից ներկայացնում ենք դրական եզրակացությունը՝ Հավելված 6 և ընդունված արձանագրությունը՝ Հավելված 7): Ցանկանում ենք Ձեր ուշադրությունը սևեռել նաև այն հանգամանքի վրա, որ դարձյալ խախտվել է Պայմանագրի 5.4 կետի դրույթները և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով մայիսի 03-ին ներկայացված արձանագրությունը դրական եզրակացությամբ հաստատվել է մայիսի 17-ին՝ 9-րդ աշխատանքային օրը (նկար 1):

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կողմից ճապկի սպիտակ տեսակի թփերի չընդունումը հիմնավորվում էր թփերի տերևակալված լինելով, սակայն, քանի որ այդպիսի մերժման հիմք Պայմանագրով նախատեսված չէր, և ոչ մի փաստաթղթում նշված չէ այդ հիմքը, մենք որոշեցինք ընդառաջ գնալ Պատվիրատուին և 2022 թվականի մայիսի 6-ի թիվ 09 գրությամբ Պատվիրատուին հայտնեցինք, որ պատրաստ ենք մատակարարումներն իրականացնել աշնանը (կից ներկայացվում է մեր կողմից ուղարկված գրությունը՝ Հավելված 8), սակայն Պատվիրատուի կողմից մեր առաջարկը մերժվեց:

Չնայած Պատվիրատուի կողմից կողմնակալ վերաբերմունքի և ապրանքների չհիմնավորված պատճառաբանությամբ մերժելուն, այնուամենայնիվ 2022 թվականի մայիսի 23-ին ևս մեր կողմից իրականացվեց ճապկի սպիտակ տեսակի 6700 (Վեց հազար յոթ հարյուր) հատ թփեր, որոնցից 4800 (չորս հազար ութ հարյուր) հատը ընդունեցին, չընդունեցին 1900 (մեկ հազար ինը հարյուր) հատը (կից ներկայացվում է համապատասխան եզրակացությունը՝ Հավելված 9-ը): Նշենք նաև, որ նշված եզրակացության ներքևում մեր ընկերության ներկայացուցիչը հայտնել է հատուկ կարծիք:

Ընդհանրացնելով վերոնշվածը, ևս մեկ անգամ ցանկանում ենք շեշտել, որ 2022 թվականի ապրիլի 28-ից մինչև 2022 թվականի մայիսի 23-ն ընկած ժամանակահատվածում «ԷԿՈ ՍԻՍԹԵՄ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է 21.400 (քսանմեկ հազար չորս հարյուր) հատ ճապկի սպիտակ տեսակի թուփ, որից փաստացի ընդունվել է 13.100 (տասներեք հազար մեկ հարյուր) հատ թուփ, արձանագրությամբ հաստատվել է միայն 500 (հինգ հարյուր) հատ թփերի ստացումը: Նշենք, նաև որ

ընդունված ճապկի սպիտակ տեսակ թփերից 12.600 (տասներկու հազարվեց հարյուր) թփերի համար, թեև մեր կողմից ներկայացվել են փաստացի դրական եզրակացությունները, բայց էլեկտրոնային համակարգում բեռնված են անհասկանալի պաճառաբանությամբ բացասական եզրակացություններ և արձանագրությունները մերժված են:

Այսպիսով, փաստացի Պատվիրատուն սուբյեկտիվ պատճառներից ելնելով հրաժարվել է ընդունել մատակարարված ճապկի սպիտակ տեսակի թփերը:

Ցանկանում ենք նշել նաև, որ անհրաժեշտության դեպքում պատրաստ ենք ներկայացնել նաև համապատասխան տեսանյութեր»:

«Էկո սիսթեմ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/212 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 12:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են ներկայացված դիրքորոշումը:

**3. <u>«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.05.2022թ. թիվ 72/314-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի ապրիլի 1-ին «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «Էկո Սիսթեմ» ՍՊԸ-ի միջև կնքված ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-22/01-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում 25.04.2022թ. կնքվել է թիվ 1 համաձայնագիրը, որի համաձայն «Էկո Սիսթեմ» ՍՊԸ-ն պարտավորվորվել է Կազմակերպությանը մատակարարել 15000 հատ ճապկի սպիտակ և 4750 հատ տոսախ մշտադալար՝ համապատասխանաբար ընդհանուր 3 750 000 և 2 600 000 հազար ՀՀ դրամ արժողություններով, որոնցից ճապկի սպիտակ բուսատեսակն ամբողջական խմբաքանակով առայսօր չի մատակարարվել ընկերության կողմից: «Էկո Սիսթեմ» ՍՊ ընկերությանը էլեկտրոնային փոստով ծանուցվել է սահմանված ժամկետում մատակարարել ապրանքները, սակայն մատակարարում չի իրականացվել, ուստի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը 25.05.2022թ. միակողմանի (մասնակի) լուծել է վերոնշյալ պայմանագիրը 15-րդ չափաբաժնի մասով:

Խնդրում եմ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ներառել «Էկո Սիսթեմ» ՍՊ ընկերությանը գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կից ներկայացվում են պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու վերաբերյալ ծանուցման և համապատասխան փաստաթղթերի պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/212 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 12:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2022/212 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2022/212 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «Էկո սիսթեմ» ՍՊԸ-ի միջև 01.04.2022թ. կնքվել է թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-22/01-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

| Ապրանքի | | | | | |
|---|---|---|---|---|---|
| չ/հ | անվանումը | Չափման միավոր | Ընդհանուր քանակ | մատակարարման | |
| | | | | Ենթակա քանակ | Ժամկետը և հասցեն |
| 15 | Ճապկի սպիտակ Cornus alba | հատ | 15000 | 15000 | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օրվա ընթացքում ՀՀ, ք.Երևան, Թեյշեբաինի 8/8 |

3. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 25.04.2022թ. կնքվել է թիվ 1 Համաձայնագիրը, որի 2.1 ենթակետի համաձայն սույն համաձայնագիրն ուժի մեջ է

մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4. Համաձայնագրին կից թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանվել է հետևյալը.

| Ապրանքի | | | | | |
|---|---|---|---|---|---|
| չ/հ | անվանումը | Չափման միավոր | Ընդհանուր քանակ | մատակարարման | |
| | | | | Ենթակա քանակ | Ժամկետը և հասցեն |
| 15 | Ճապկի սպիտակ Cornus alba | հատ | 15000 | 15000 | Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում ՀՀ, ք.Երևան, Արցախի փող. 4-րդ նրբ., 12 շին. տարածք |

5. Պատվիրատուն «Էկո սիսթեմ» ՍՊԸ-ին ուղղված 17.05.2022թ. թիվ 72/290-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «Էկո Սիսթեմ» ՍՊԸ-ի միջև 2022թ. ապրիլի 1-ին կնքված ԿՇՄՊ-ԳՀՀԱՊՁԲ-22/01-1 ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) շրջանակներում 2022 թվականի ապրիլի 25-ին կնքված համաձայնագրով նախատեսված մատակարարման քսանօրյա ժամկետն ավարտվել է: Հաշվի առնելով պայմանագրի 2.1.3 կետը՝ առաջարկում ենք Ձեզ հնգօրյա ժամկետում մատակարարել պայմանագրով նախատեսված, սակայն չմատակարարված ապրանքներն ամբողջ քանակությանբ, հակառակ դեպքում պայմանագիրը միակողմանի կլուծվի»:

6. Պատվիրատուն «Էկո սիսթեմ» ՍՊԸ-ին ուղղված 25.05.2022թ. թիվ 72/309-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի ապրիլի 1-ին «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «Էկո Սիսթեմ» ՍՊԸ-ի միջև կնքված ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-22/01-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում 25.04.2022թ. կնքվել է թիվ 1 համաձայնագիրը, որի համաձայն «Էկո Սիս թեմ» ՍՊԸ-ն պարտավորվորվել է Կազմակերպությանը մատակարարել 15000 հատ ճապկի սպիտակ և 4750 հատ տոսախ մշտադալար ընդհանուր՝ համապատասխանաբար 3 750 000 և 2 600 000 հազար ՀՀ դրամ արժողություններով, որոնցից ճապկի սպիտակ բուսատեսակը ամբողջական խմբաքանակով առայսօր չի մատակարարվել ընկերության կողմից: «Էկո Սիսթեմ» ՍՊԸ-ին ապրանքները մատակարարելու համար նաև ծանուցվել է էլեկտրոնային փոստով, սակայն մատակարարում չի իրականացվել:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1.7 կետը, այն է՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (ամբողջ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն

խախտել է պայմանագիրը, իսկ համաձայն պայմանագրի 2.1.7.1 կետի բ ենթակետի վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը 2022թ-ի մայիսի 25-ին մասնակի միակողմանի լուծում է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և ««Էկո Սիսթեմ» ՍՊԸ-ի միջև 01.04.2022թ-ին կնքված ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-22/01-1 ծածկագրով պայմանագիրը 15-րդ չափաբաժնի մասով:

«Էկո Սիսթեմ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին»:

7. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 25.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9980-2022 գրությունը, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի 26.05.2022թ. թիվ 72/314-22 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և

ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «Էկո սիսթեմ» ՍՊԸ-ի միջև 01.04.2022թ. կնքվել է թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-22/01-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

| Ապրանքի | | | | | |
|---|---|---|---|---|---|
| չ/հ | անվանումը | Չափման միավոր | Ընդհանուր քանակ | մատակարարման | |
| | | | | Ենթակա քանակ | Ժամկետը և հասցեն |
| 15 | Ճապկի սպիտակ Cornus alba | հատ | 15000 | 15000 | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օրվա ընթացքում ՀՀ, ք.Երևան, Թեյշեբաինի 8/8 |

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 25.04.2022թ. կնքվել է թիվ 1 Համաձայնագիրը, որի 2.1 ենթակետի համաձայն սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Համաձայնագրին կից թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանվել է հետևյալը.

| Ապրանքի | | | | | |
|---|---|---|---|---|---|
| չ/հ | անվանումը | Չափման միավոր | Ընդհանուր քանակ | մատակարարման | |
| | | | | Ենթակա քանակ | Ժամկետը և հասցեն |
| 15 | Ճապկի սպիտակ Cornus alba | հատ | 15000 | 15000 | Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում ՀՀ, ք.Երևան, Արցախի փող. 4-րդ նրբ., 12 շին. տարածք |

Պատվիրատուն «Էկո սիսթեմ» ՍՊԸ-ին ուղղված 17.05.2022թ. թիվ 72/290-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «Էկո Սիսթեմ» ՍՊԸ-ի միջև 2022թ. ապրիլի 1-ին կնքված ԿՇՄՊ-ԳՀՀԱՊՁԲ-22/01-1 ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) շրջանակներում 2022 թվականի ապրիլի 25-ին կնքված համաձայնագրով նախատեսված մատակարարման քսանօրյա ժամկետն ավարտվել է: Հաշվի առնելով պայմանագրի 2.1.3 կետը՝ առաջարկում ենք Ձեզ հնգօրյա ժամկետում մատակարարել պայմանագրով նախատեսված, սակայն չմատակարարված ապրանքներն ամբողջ քանակությանբ, հակառակ դեպքում պայմանագիրը միակողմանի կլուծվի»:

Պատվիրատուն «Էկո սիսթեմ» ՍՊԸ-ին ուղղված 25.05.2022թ. թիվ 72/309-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի ապրիլի 1-ին «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «Էկո Սիսթեմ» ՍՊԸ-ի միջև կնքված ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-22/01-1

ծածկագրով պայմանագրի շրջանակներում 25.04.2022թ. կնքվել է թիվ 1 համաձայնագիրը, որի համաձայն «Էկո Սիս թեմ» ՍՊԸ-ն պարտավորվորվել է Կազմակերպությանը մատակարարել 15000 հատ ճապկի սպիտակ և 4750 հատ տոսախ մշտադալար ընդհանուր՝ համապատասխանաբար 3 750 000 և 2 600 000 հազար ՀՀ դրամ արժողություններով, որոնցից ճապկի սպիտակ բուսատեսակը ամբողջական խմբաքանակով առայսօր չի մատակարարվել ընկերության կողմից: «Էկո Սիսթեմ» ՍՊԸ-ին ապրանքները մատակարարելու համար նաև ծանուցվել է էլեկտրոնային փոստով, սակայն մատակարարում չի իրականացվել:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1.7 կետը, այն է՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (րիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը, իսկ համաձայն պայմանագրի 2.1.7.1 կետի բ ենթակետի վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը 2022թ-ի մայիսի 25-ին մասնակի միակողմանի լուծում է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և ««Էկո Սիսթեմ» ՍՊԸ-ի միջև 01.04.2022թ-ին կնքված ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-22/01-1 ծածկագրով պայմանագիրը 15-րդ չափաբաժնի մասով:

«Էկո Սիսթեմ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին»:

***<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 25.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>***

Ընկերությունը ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

1. «Պայմանագրի պայմաններին համապատասխան 2022 թվականի ապրիլի 28-ին մեր կողմից մատակարարված 10.000 հատ ճապկի սպիտակ տեսակից ընդունվել է միայն 7.800 հատը, (...)»:

Ի հավաստումն նշվածի, Ընկերության կողմից ներկայացվել է 28.04.2022թ. հաշիվ վավերագիր, համաձայն որի մատակարարվել է 7800 հատ «Ճապկի սպիտակ» ապրանքը, ինչպես նաև Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների

վերաբերյալ 28.04.2022թ. կազմված թիվ 1 եզրակացությունը, համաձայն որի Պատվիրատուն արձանագրել է, որ մատակարարը ներկայացրել է 10000 հատ սպիտակ ճապկի, որից ընդունվել է 7800 հատ «Ճապկի սպիտակ» ապրանքը:

2.«Պայմանագրի պայմաններին համապատասխան 2022 թվականի մայիսի 02-ին մեր կողմից մատակարարված 4.700 հատ ճապկի սպիտակ տեսակից ընդունվել է միայն 500 հատը»:

Ի հավաստումն նշվածի, Ընկերության կողմից ներկայացվել է 02.05.2022թ. հաշիվ վավերագիր, համաձայն որի մատակարարվել է 500 հատ «Ճապկի սպիտակ» ապրանքը, Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման 02.05.2022թ. թիվ 2 արձանագրությունը, որով ևս արձանագրվել է, որ փաստացի մատակարարվել է 4700 հատ ճապկի, որից տեխնիկական բնութագրին չեն համապատասխանել 4200 հատը և փաստացի մատակարարվել է 500 հատ «Ճապկի սպիտակ» ապրանքը, ինչպես նաև Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ 02.05.2022թ. կազմված թիվ 2 եզրակացությունը, համաձայն որի Պատվիրատուն արձանագրել է, որ մատակարարված 500 հատ «Ճապկի սպիտակ» ապրանքը համապատասխանել է բնութագրին և 10.05.2022թ. թիվ 22/01-1-2 դրական եզրակացությունը:

3.«Չնայած Պատվիրատուի կողմից կողմնակալ վերաբերմունքի և ապրանքների չհիմնավորված պատճառաբանությամբ մերժելուն, այնուամենայնիվ 2022 թվականի մայիսի 23-ին ևս մեր կողմից իրականացվեց ճապկի սպիտակ տեսակի 6700 (Վեց հազար յոթ հարյուր) հատ թփեր, որոնցից 4800 (չորս հազար ութ հարյուր) հատը ընդունեցին, չընդունեցին 1900»:

Ի հավաստումն նշվածի, Ընկերության կողմից ներկայացվել է 23.05.2022թ. հաշիվ վավերագիր, համաձայն որի մատակարարվել է 6700 հատ «Ճապկի սպիտակ» ապրանքը, Պատվիրատուի կողմից ձեռագիր կազմված արձանագրությունը, համաձայն որի մատակարարված 6700 հատ «Ճապկի սպիտակ» ապրանքից ընդունվել է 4800 հատը, իսկ 1900 հատը չի ընդունվել քանի որ չի համապատասխանել տեխնիկական բնութագրին, ինչպես նաև Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ 24.05.2022թ. կազմված թիվ 01-1-9 եզրակացությունը, համաձայն որի Պատվիրատուն արձանագրել է, որ փաստացի մատակարարվել է 4800 հատ «Ճապկի սպիտակ» ապրանք:

Այսպիսով՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.05.2022թ. թիվ 72/314-22 գրությամբ հայտնել, որ համաձայն Պայմանագրի «Էկո Սիսթեմ» ՍՊԸ-ն պարտավորվել է Կազմակերպությանը մատակարարել 15000 հատ ճապկի սպիտակ որոնցից ճապկի սպիտակ բուսատեսակն ամբողջական խմբաքանակով առայսօր չի մատակարարվել (...): «Էկո Սիսթեմ» ՍՊ ընկերությանը էլեկտրոնային փոստով ծանուցվել է սահմանված ժամկետում մատակարարել ապրանքները, սակայն մատակարարում չի իրականացվել, ուստի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը 25.05.2022թ. միակողմանի (մասնակի) լուծել է վերոնշյալ պայմանագիրը 15-րդ չափաբաժնի մասով:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Մինչդեռ՝ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որը վերը նշված ապրանքատեսակը մատակարարվել է, սակայն Պատվիրատուի կողմից դրանց մի մասը ընդունվել, իսկ մյուս մասը չի ընդունվել տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմքով, այսինքն՝ Պայմանագիրը 2.1.7.1 կետի բ) ենթակետով, այն է՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի, իրավաչափ չէ:

Այլ հարց է եթե պայմանագիրը լուծվեր ա) ենթակետի հիմքով, այն է՝ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, որի շրջանակներում էլ հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Պայմանագրի 2.2.4 կետի համաձայն՝ գնորդը պարտավոր է ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

Պայմանագրի 5.3 կետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին

հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 108-րդ կետի համաձայն՝ Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: ***<u>Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ,</u>*** որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 109-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: ***<u>Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ</u>***: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար: ՀՀ պաշտպանության նախարարության պատվերներով իրականացվող տեղական արտադրության ռազմական նշանակության ապրանքի և (կամ) գույքի համար, որոնց ընդունումը (նախատեսված է) իրականացվել է պատվիրատուի ներկայացուցչության միջոցով, արձանագրության ստորագրման համար հիմք է ընդունվում

ներկայացուցչության կողմից այդ ապրանքի և (կամ) գույքի համար տրված դրական եզրակացությունը:

Կարգի 110-րդ կետի համաձայն՝ Էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: ***Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը***.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանման՝ ***գնման հայտը նախագծած ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն***.

3) ***եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է՝***

***բ. բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:***

Կարգի 111-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 109-րդ կետով նախատեսված գրավոր եզրակացության ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Այսպիսով՝ վերը շարադրված իրավական կարգավորումների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության

ստորագրմամբ, այնուհետև Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը, որից հետո պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցիչը տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն և եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին, ***մինչդեռ՝ Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերը նշված փաստաթղթերը, այն է՝ հանձնման-ընդունման արձանագրությունը, դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը, ինչպես նաև պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտը (Հավելված 3.1) առկա չեն:***

Նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Էկո սիսթեմ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի 2.1.7.1 կետի ա) և բ) ենթակետերի խախտման փաստը և, որպես վերը նշվածի հետևանք, Պայմանագրի միակողմանի լուծման իրավաչափությունը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Էկո սիսթեմ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9980-2022 գրությամբ «Էկո սիսթեմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**